Հավելված
Վարդենիս համայնքի ավագանու
26 դեկտեմբերի 2022 թվականի N 133-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ

2022-2026 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀՆԳԱՄՅԱ ԾՐԱԳԻՐ

Կազմել է՝ համայնքի ղեկավար Ահարոն Խաչատրյանը

Հաստատվել է՝ համայնքի ավագանու 2022թ դեկտեմբերի 26-ի N 133-Ա որոշմամբ

Փոփոխություն՝ 2023թ նոյեմբերի 29-ի N 156-Ա որոշմամբ

Վարդենիս 2022թ.

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք 4
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն .....
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն .....
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը .....
2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը .....
2.4. Պատվիրակված ծառայություններ .....
2.5. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները
2.6. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ .....
2.7. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն .....
3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում .....
3.1. Համայնքի զարգացման տեսլական .....
3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ .....
4. ՀՀՀԶԾ ֆինանսավորում .....
5. ՀՀՀԶԾ մոնիթորինգի անձնագիր .....

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2022-2026թթ հնգամյա զարգացման ծրագիրը (ՀԶՀԾ) կազմվել է հիմք ընդունելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքով սահմանված՝ տեղական ինքնակառավարման մարմինների (ՏԻՄ) իրավասությունները ու լիազորությունները նրանց գործունեության բնագացառներում (ոլորտներում), ՀԶՀԾ-ի մշակման մեթոդաբանական առանձնահատկությունները և հիմքերը:

Ներկայացվող ՀԶՀԾ-ն առաջիկա հինգ տարիների համար հանդիսանալու է Վարդենիս համայնքի զարգացման հիմնական փաստաթղթերից մեկը: Այն մշակվել է մասնակցային եղանակով՝ հաշվի առնելով համայնքի շահարգգիռ բոլոր կողմերի առաջարկությունները:

Հարցումների միջոցով վեր են հանվել համայնքի բնակիչներին հուզող խնդիրները, դրանք գնահատվել են համայնքային ժողովի ժամանակ համայնքային ակտիվ խմբի կողմից և դասակարգվել ըստ առաջնահերթության: Վեր հանված հիմնախնդիրների հիման վրա մշակվել է Վարդենիս համայնքի 2022-2026թթ ՀԶՀԾ-ն: Այն ներկայացնում է համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակի համալիր վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական և տնտեսական ռեսուրսների գնահատման արդյունքում նպատակային զարգացման տեսանկյունից ձեռնարկվելիք քայլերի ամբողջություն, որը նախատեսում է ռազմավարական քաղաքականությամբ համայնքի խնդիրների արդյունավետ լուծում և նպատակային բյուջետավորման գործընթացի իրականացում: ՀԶՀԾ-ն ներառում է նաև Վարդենիս համայնքի ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի բաղադրիչները:

Վարդենիս համայնքի ներդաշնակ և համաչափ զարգացման, Վարդենիսի բնակիչների բարեկեցության ապահովման համար առաջիկա հինգ տարիներին ընդունված ծրագիրը հանդիսանում է համայնքի ամենօրյա փաստաթուղթը:

ՀԶՀԾ-ում ներկայացվում է համանքի սոցիալ-տնտեսական ընդհանուր և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈՒԹՀՎ վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները, սահմանվում են համայնքի երկարաժամկետ դեսլականը, թե ինչպիսին ենք ցանկանում տեսնել մեր համայնքը ապագայում, ռազմավարությունը և սույն ՀԶՀԾ-ի հիմնական նպատակները, ներկայացվում են պետության և միջազգային դոնոր կազմակերպությունների հետ համայնքում գալիք հինգ տարիների ընթացքում նախատեսվող (շարունակվող) համագործակցության ուղղությունները, ներկայացվում է համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական տրանսֆերտներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գաիք 5 տարիների եկամտային ցուցաիշները:

Զարգացման ծրագրերը գնահատվել են ըստ սահմանված չափորոշիչների և սահմանվել են առաջնահերթություններ: Ամփոփ ձևով ներկայացվել են առաջնահերթ այն ծրագրերը, որոնք մոտավոր հաշվարկներով ակնկալվում է, որ հնարավոր կլինի իրականացնել կանխատեսվող ֆինանսական միջոցներով: Գալիք հինգ տարիների ընթացքում իրականացման ենթակա ծրագրեը ձևակերպվել են օգտագործելով ծրագրերի կազմման օրինակելի ձև, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ և այլ) և դրանց մոտավոր արժեքներն ըստ գալիք հինգ տարիներ:

Այս փաստաթուղթն է լինելու հիմքը առաջիկա բազմաթիվ նախաձեռնությունների, կոնկրետ իրագործելի ծրագրերի տարեկան համայնքային ծրագրերի իրագործման համար, նաև դառնալու

համայնքային ներկա իշխանության աշխատանքի արդյունքների գնահատման օրինակելի չափման միավորը:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

Վարդենիս խոշորացված համայնքը գտնվում է ՀՀ Գեղարքունիքի մարզում, Սևանա լճի հարավ-արևելյան կողմում: Ծովի մակերևույթից միջին բարձրությունը կազմում է 2006-2008մ, կլիման խիստ է, ձմռան տևողությունը գրեթէ 6 ամիս, հունվարի միջին ջերմաստիճանը -8°C, տարեկան տեղումների քանակը կազմում է 400-500մմ: Վարդենիս խոշորացված համայնքի Այք, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղաքար, Գեղամասար, Լճավան, Կախակն, Կութ, Կուտական, Մ. Մասրիկ, Տորֆական, Վանևան, Նորակերտ, Փ. Մասրիկ, Կարճաղբյուր, Ծովակ, Խաչաղբյուր, Վարդենիս, Փամբակ, Շատվան, Լուսակունք, Մաքենիս, Ն. Շորժա, Նորաբակ, Շատջրեք, Ջաղացաձոր, Սոթք, Վ. Շորժա, Տրետուք, Ակունք, Դարանակ բնակավայրերը բարձր լեռնային են:

Վարդենիսը Հայաստան աշխարհի հնագույն բնակավայրերից է: Այն գտնվել է Մեծ Հայքի Սյունիք նահանգի Սոթք գավառի կազմում: Համայնքի նախկին անվանումներն են եղել Վասակաշենը, Ոսկեշենը, իսկ 1969 թվականից անվանվել է Վարդենիս:

Համայնքի ինչպես քաղաքային, այնպես էլ գյուղական բնակավայրերը հարուստ են պատմամշակութային հուշահամալիրներով և հուշարձաններով, ինչպիսիք են օրինակ Մաքենյաց վանքը, Սոքի Բազիլիկ եկեղեցին, Այրքի, Կարճաղբյուրի մատուռները, դամբարանադաշտերը, Կիկլոպյան ամրոցները, խաչքարերը, Վարդենիս Սբ. Աստվածածին եկեղեցին և այլ կոթողներ: Համայնքում առանձնակի ուշադրության է արժանի Մելիք-Շահնազարյանների տոհմին պատկանող գերեզմանատունը, որը վկայում է հայ իշխանական մելիքական տոհմի իշխանությունը Սոդք գավառում՝ Մեծ Մասրիկ մելիքանիստ ավանով: Մելիք-Շահնազարյանների տոհմը սերել է Դոփյանների իշխանական տոհմից և դեռևս 15-րդ դարում առանձնացել է Դոփյաններից և իր տիրույթներն էին Սոդք գավառի Մեծ Մասրիկ մելիքանիստ ավանը և Գեղարքունիք գավառի մի մասը:

Տարածաշրջանը առանձնակի հետաքրքրություն է ներայացնում նաև Սևանա լճով, անապակ աղբյուրներով, ալպյան մարգագետիններով ու բազմաթիվ բնական հուշարձաններով:

Վարդենիս համայնքը 2021թվականի համայնքների խոշորացման երկրորդ փուլում խոշորացվեց՝ իր կազմում ունենալով 1 քաղաքային՝ Վարդենիս և 34 գյուղական՝ բնակավայրեր: Վարդենիս համայնքի կենտրոն Վարդենիս քաղաքը ՀՀ մայրաքաղաք Երևանից գտնվում է 170կմ, իսկ մարզկենտրոն Գավառից 75կմ հեռավորության վրա: Վերին Շորժա, Ներքին Շորժա, Նորաբակ, Կութ, Ազատ և Սոթք գյուղերը հանդիսանում են սահմանամերձ համայնքներ: Համայնքի Վարդենիս, Ակունք, Դարանակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ, Շատվան, Վանևան, Տորֆական, Փամբակ և Փոքր Մասրիկ բնակավայրերը բարձր լեռնային են:

Համայնքի վարչական տարածքը կամում է 111.658 հա:

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

Վարդենիս համայնքի տարեկան բյուջեն կազմում է 1.665.793.200 (մեկ միլիարդ վեց հարյուր վաթսունհինգ միլիոն յոթ հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր) ՀՀ դրամ, որից համայնքի սեծական եկամուտների բաժինը կազմում է 29.6%:

Վարդենիս համայնքում արդյունաբերության հիմնական ճյուղերն են կաթնամթերքի արտադրությունը և վերամշակումը, հացաբուլկեղենի արտադրությունը, թանկարժեք մետաղների արդյունահանումը (Սոթքի ոսկու հանքավայր), ավազի արդյունահանումը (Ծովակի ավազի հանքավայր):

Վարդենիս համայնքում գործում են 4 բանկեր, 4 ՈՒՎԿ-ներ, բջջային օպերատորների 3 գրասենյակներ, ապահովագրական ընկերություններ, մթերային, կենցաղային, էլեկտրատեխնիկայի, կահույքի, շինանյութի խանութներ, դեղատներ:

Վարդենիս խոշորացված համայնքում բնակչության հիմնական զբաղմունքը գյուղատնտեսությունն է: Մանսավորապես զարգացած է կարտոֆիլաբուծությունը, հացահատիկային սերմերի մշակումը, կաղամբի մշակումը, խոշեր եղջերավոր անասնապահությունը, ոչխարաբուծությունը, մեղվաբուծությունը, տնտեսության մեջ որոշակի տեղ են գրավում նաև ջրմոցային տնտեսությունները:

Գյուղատնտեսական մթերքների հիմնական սպառման շուկան տեղում է:

Վարդենիս խոշորացված համայնքը հարուստ է պատմական և մշակութային վայրերով: Վարդենիս համայնքի հնագիտական և ճարտարապետական հուշարձաններից արժեքավոր են Կարճաղբյուրի, Այրքի կիկլոպյան ամրոցները, Ծովակի Սարդուր Բ-ի սեպագիր արձանագրությունը (մ.թ.ա. 8-րդ դ.), Մաքենյաց վանքը (9-10-րդ դդ.), Մ. Մասրիկի 881թվականի խաչքարը, Ազատի Սբ. Աստվածածին եկեղեցին (1221թ., վերակառուցվել է 1618-ին), Սոթքի Սբ. Աստվածածին եկեղեցին (17-րդ դ.) և այլ բազմաթիվ խաչքարեր, մատուռներ:

Վարդենիս քաղաքի Սբ. Աստվածածին եկեղեցին կառուցվել է 1902-1910թթ, ըստ երևույթին ավելի հնից գոյություն ունեցած եկեղեցու տեղում: Այն ունի խաչաձև հատակագիծ և սլացիկ գմբեթ, որի թմբուկի վրա կան երկարավուն լուսամուտներ: Շենքը կառուցված է գունագեղ և սրբատաշ բազալտով, ունի 3 կամարակապ դռներ: Բակում կան գերեզմաններ, գեղազարդ խաչքարեր, տապանաքարեր, որոնք ներկայացնում են 15-18-րդ դարերը: Այստեղ մինչև 19-րդ դարի վերջերը պահվում էին մի քանի ձեռագիր ու հին տպագիր գրքեր: Եկեղեցու բակում թաղված են ժամանակագիր Հովհաննես Ծարենցին (16-րդ դ.) և Սարգիս Վարդապետը:

Վարդենիս քաղաքում է գտնվում Սուրբ Վարդան կոչվող սրբատեղին, որը իր անվանումը ստացել է Սպարապետ Վարդան Մամիկոնյանի և նրա զորքի այդ տարածքում կանգ առնելու և ձմեռելու պատճառով: Ըստ պատմական ավանդազրույցների՝ Ավարայրի ճակատամարտից առաջ

Վարդան Մաիկոնյանը իր զորքով անցել է Վարդենիսի տարածքով և ձմեռը անցկացրել է ներկայիս Սբ. Վարդանի տարածքում, քանի որ այն ունի քարայրներ, ընդարձակ հարթավայրեր, որտեղ հնարավոր է եղել վրաններ ամրացնել: Ավանդազրույցի համաձայն, երբ կանգ են առել այդ տարածքում, Սպարապետը թրով ուժեղ հարվածել է գետնին, որտեղից էլ սառնորակ և մաքուր ջուր է հորդել, ինչն էլ պատճառներից մեկն է եղել զորքի հենց այդ տարածքում ձմռանը կանգ առնելուն:

Տարածաշրջանի բնակիչների համար դարեր շարունակ սրբավայրը մեծ արժեք է ունեցել և սերնդեսերունդ փոխանցվել է դրա նշանակությունը: Տեղացիների հավատմամբ սրբավայրից բխող ջուրը բուժիչ նշանակություն ունի, ջրի ակունքներում աջող մեծ տերևներով թփերը ցավը բուժող հատկություններ ունեն, նրանք նշում են, որ բավական է այն կապել ցավացող հատվածին, ցավն անհետանում է:

Վարդենիս քաղաքը աշխարհին է տվել աշխարհահռչակ աստղագետ, աստղաֆիզկոս, տեսական աստղաֆիզիկայի հիմնադիրներից մեկին՝ Վիկտոր Համբարձումյանին: Վիկտոր Համբարձումյանի հայրական տունը գտնվում է Վարդենիս քաղաքում, որը ժամանակին գործել է որպես տուն-թանգարան, սակայն, ցավոք, այն ներկայում գտնվում է անբարեկարգ վիճակում: Վարդենիս քաղաքում նաև գործում է Վիկտոր Համբարձումյանի անունը կրող զբոսայգին: Այն Վարդենիսի կենտրոնական փողոցում է գտնվում, հարում է մշակույթի պալատի շենքին, վերանորոգվել է 2019 թվականին:

Վարդենիս խոշորացված համայնքում գործում են 34 հանրակրթական դպրոցներ, որոնցում սովորում են 3862 աշակերտներ:

Համայնքում նախադպրոցական ուսումնական կրթություն են մատուցում 10 մանկապարտեզներ, 12 դպրոցներում գործող նախակրթարաններ:

Վարդենիս քաղաքում գործում են առողջապահական հետևյալ հաստատությունները՝ Վարդենիսի քաղաքային հիվանդանոց, Վարդենիսի պոլիկլինիկա, Վարդենիսի զինվորական հոսպիտալ:

Նկարագրել համայնքի սոցիալ-տնտեսական իրավիճակն, անդրադառնալով հետևյալ հարցերին.

- *համայնքի ընդհանուր տարեկան բյուջեն,*
- *ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը (%),*
- *համայնքի հիմնական արդյունաբերական ձեռնարկությունները և արդյունաբերական արտադրանքը , հիմնական սպառման շուկաներ,*

- *ծառայությունների բնագավառի համայնքի հիմնական ձեռնարկությունները և հիմնական ծառայությունները՝ ներառյալ ֆինանսական ծառայություններ մատուցող կազմակերպությունները (բանկեր, ՈՒՎԿ-ներ),*
- *համայնքի հիմնական գյուղատնտեսական արտադրանքը և ծավալները, հիմնական սպառման շուկաներ,*
- *զբոսաշրջային հետաքրքրություն ներկայացնող բնական, պատմական և մշակութային հուշարձաններ, կազմակերպվող միջոցառումներ և այլ հետաքրքրություններ,*
- *դպրոցական, նախադպրոցական և արտադրպրոցական կրթական հաստատություններ, ԲՈՒՀ-եր,*
- *առողջապահական հաստատություններ (ըստ տեսակների),*
- *համայնքի կողմից մասնավոր ընկերություններին պատվիրակված ծառայություններ,*
- *ընտանեկան նպաստների համակարգում գրանցված ընտանիքներ,*
- *գործազրկության մակարդակը (քաղաքային բնակավայրերում):*

Կրթական հաստատությունների համար նշել, թե դրանք քանի հոգու համար են նախատեսված և քանի հոգի են փաստացի ընդգրկված այդ հաստատություններում: Բժշկական հիմնարկների համար նշել, թե դրանք քանի հոգու համար են նախատեսված և տարեկան քանի այցելու ունեն:

Խոշորացված համայնքների համար տեղեկությունները տրամադրել ըստ առանձին բնակավայրերի:

Հնարավորինս տեղեկությունները տրամադրել աղյուսակային և գծապատկերային տեսքով:

Ծավալ՝ առավելագույնը 5 էջ: Գծապատկերների առկայության դեպքում՝ 7 էջ:

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

Նկարագրել՝

- *համայնքի վարչական տարածքում պետության կողմից գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական և մարզային ծրագրերը և միջոցառումները,*
- *հարևան համայնքների հետ համատեղ գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) միջհամայնքային համագործակցության նպատակային ծրագրերը և միջոցառումները,*
- *միջազգային և տեղական դոնոր կազմակերպությունների, արտասահմանյան երկրների համայնքների հետ համագործակցության շրջանակներում նախատեսվող (շարունակվող) ծրագրերը և միջոցառումները,*
- *տեղացի և արտասահմանյան բարերարների կողմից իրականացվող ծրագրերը,*
- *համայնքի վարչական տարածքում մասնավոր ընկերությունների կողմից նախատեսվող (շարունակվող) ծրագրերը, ներդրումները և միջոցառումները:*

Պետության կողմից իրականացվող ծրագրերի պարագայում գնահատել ծրագրի ազդեցությունը համայնքի վրա:

Միջհամայնքային, միջազգային կազմակերպությունների ֆինանսավորմամբ և մասնավոր ընկերությունների կողմից իրականացվող ծրագրերի պարագայում, ծրագրերի նկարագրական մասից բացի, պարտադիր կերպով նշել ծրագրի նպատակը, ակնկալվող արդյունքներն ու ազդեցությունը համայնքի վրա:

Խոշորացված համայնքների դեպքում նկարագրել ծրագրերն ըստ բնակավայրերի, եթե դրանք իրարից տարբերվում են:

Համայնքի վարչական տարածքում առաջիկա հինգ տարիների համար պետության հետ համատեղ նախատեսվում են իրականացնել հետևյալ ծրագրերը (սուբվենցիոն ծրագրեր).

2023-2024թթ

Ծրագիր 1. *Վարդենիս քաղաքի Երիտասարդության փողոց, 12 շենք, Երիտասարդության փողոց, 3 շենք, Լեռնագործների փողոց, ½ շենք, Խ. Ստեփանյան փողոց, 5 շենք, Խ. Ստեփանյան փողոց, 7 շենք, Ա. Սեսմանուկյան փողոց, 5 շենք բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում:*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 2. *Վարդենիս քաղաքի Ռոմանի փողոց, 2 շենք, Երիտասարդության փողոց, 16 շենք, Երիտասարդության փողոց, 14 շենք, Վ. Համբարձումյան փողոց, 11 շենք, Ա. Սեսմանուկյան փողոց, 1 շենք, Ա. Սեսմանուկյան փողոց, 3 շենք բակերի ասֆալտապատում:*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 3*. Վարդենիս քաղաքի Գայի փողոցի ասֆալապատում, միակողմանի մայթի կառուցում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 4*. Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյան փողոցի ասֆալտապատում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 5. Վարդենիս համայնքի Արցախյան պատերազմի զոհերի հիշատակի հուշահամալիրի կառուցում

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 6. *Վարդենիս քաղաքի <<Ալեքի>> գերեզմանոցցի ցանկապատում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 7. *Վարդենիս համայնքի Փամբակ, Գեղամասար, Ավազան, Կախակն, Տրետուք, Նորաբակ, Ակունք, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Լճավան, Գեղաքար բնակավայրերում խմելու ջրի ջրագծերի, կապտաժների կառուցում կամ վերակառուցում*

Ծրագրի տևողությունը- *1,6 տարի (2023-2024թ)*

Ծրագիր 8. *Վարդենիս համայնքի Արփունք, Փոքր Մասրիկ, Կուտական, Տրետուք, Սոթք, Գեղամաբակ, Ձաղացաձոր, Շատջրեք, Ակունք, Լուսակունք, Խաչաղբյուր, Մաքենիս, Ախպրաձոր բնակավայրերում ոռոգման ջրի ջրագծերի, խորքային հորերի կառուցում կամ վերակառուցում*

Ծրագրի տևողությունը- *1,6 տարի (2023-2024թ)*

Ծրագիր 9. *Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրում պատսպարանի, Կութ, Ազատ, Նորաբակ բնակավայրերում թաքստոցների կառուցում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 10. *Վարդենիս համայնքի Սոթք բնակավայրի այգու կառուցման շարունակություն*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 11. *Վարդենիս համայնքի Կութ, Ազատ, Ձաղացաձոր, Շատջրեք և Ծովակ բնակավայրերում գերեզմանոցների ցանկապատում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Շահառուներ –

Ծրագիր 12. *Վարդենիս համայնքի Փամբակ, Դարանակ, Արեգունի, Գեղամասար, Արփունք, Կախակն, Սոթք, Կութ, Ձաղացաձոր, Շատջրեք, Վանևան, Ծովակ, Խաչաղբյուր, Ախպրաձոր, Մաքենիս բնակավայրերում փողոցային լուսավորության ցանցի անցկացում:*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 13. *Վարդենիս քաղաքի Բանդեր թաղամասի կոյուղագծի և դրենաժային համակարգի կառուցում:*

Ծրագրի տևողությունը- *1,6 տարի (2023-2024թ)*

Ծրագիր 14. *Վարդենիս համայնքի Արփունք, Ակունք, Տորֆավան, Ծովակ, Կարճաղբյուր բնակավայրերի կենտրոնական փողոցների ասֆալտապատում:*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 15. *Վարդենիս քաղաքի Երիտասարդության փողոց, 6 շենք, Խ. Ստեփանյան փողոց, 3 շենք, Ա. Սեսմանուկյան փողոց, 1 շենք, Ա. Սեսմանուկյան փողոց, 1/14 շենք բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023թ)*

Ծրագիր 16. *Վարդենիս համայնքի Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամասար, Կուտական, Նորակերտ, Սոթք, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ բնակավայրերի խմելու ջրի ջրագծերի, կապտաժների և ՕԿՁ-ների կառուցում կամ վերակառուցում:*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2023-2024թթ)*

Ծրագիր 17. Վարդենիս քաղաքի Կամոյի փողոցի սալարկում և երկկողմանի մայթի կառուցում

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024թ)*

Ծրագիր 18. *Վարդենիս համայնքի Վարդենիսի թիվ 2, թիվ 1 մանկապարտեզների, Գեղամասար, Ակունք, Նորակերտ բնկավայրերի մանկապարտեզների կապիտալ նորոգում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024-2025թ)*

2024-2025թթ

Ծրագիր 19. *Վարդենիս համայնքի Կութ, Ազատ, Շատվան, Գեղամաբակ և Վանևան բնակավայրերի վարչական շենքերի հիմնանորոգում, Փամբակ, Կարճաղբյուր բնակավայրերի հանդիսությունների դահլիճների կապիտալ նորոգում, Շատվան և Կարճաղբյուր բնակավայրերի հանդիսությունների սրահների կահավորում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024թ)*

Ծրագիր 20. *Վարդենիս համայնքի Սոթք և Տորֆավան բնակավայրի գազամատակարարման ցանցի ընդլայնում, Վանևան բնակավայրի գազաֆիկացում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024թ)*

Ծրագիր 21. *Վարդենիս համայնքի Կուտական և Դարանակ բնակավայրերի կամուրջների վերակառուցում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024թ)*

Ծրագիր 22. *Վարդենիս քաղաքի Վ. Համբարձումյանի անվան Տուն-թանգարանի վերանորոգում և թանգարանի բացում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024-2025թ)*

Ծրագիր 23. *Վարդենիս համայնքի Նորակերտ, Փոքր Մասրիկ, Գեղամասար բնակավայրերի գազաֆիկացում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024թ)*

Ծրագիր 24. *Վարդենիս քաղաքի 6 հատ բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024թ)*

Ծրագիր 25*. Վարդենիս քաղաքի 6 հատ բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024թ)*

Ծրագիր 26. *Վարդենիս քաղաքի Գ. Կարապետյանի անվան զբոսայգու հիմնանորոգում*

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2024թ)*

–

2025-2026թթ

Ծրագիր 27. Վարդենիսի մուտքի կառուցում

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2025թ)*

Ծրագիր 28. Վարդենիս համայնքի Կարճաղբյուր բնակավայրի <<Արծիվ >> հուշարձանի տարածքի բարեկարգում

Ծրագրի տևողությունը- *1 տարի (2025թ)*

Ծրագիր 29. Վարդենիս քաղաքի բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատում

Ծրագրի տևողությունը- *2 տարի (2025-2026թթ)*

Ծրագիր 30. Վարդենիս համայնքի վարչական շրջանների խմելու ջրի ջրագծերի կառուցում կամ վերակառուցում

Ծրագրի տևողությունը- *2 տարի (2025-2026թ)*

2022-2026թթ

Ծրագիր 28. Վարդենիս համայնքում անվտանգության ապահովում. ապահովել համայնքի բնակչության պատսպարումը և պաշտպանական կառույցների պատրաստ վիճակում պահել: Գործառույթներն իրականացնելիս համագործակցել ՀՀ ՆԳՆ ՓԾ Գեղարքունիքի փրկարարական վարչության հետ:

2.4. Պատվիրակված ծառայություններ

Նշել համայնք-մասնավոր հատված համագործակցության շրջանակներում մասնավոր ընկերություններին պատվիրակված ծառայությունների մասին: Հստակեցնել ծառայությունը և պատվիրակման մոդելը:

Այդպիսիք չկան:

2.5. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները

Համայնքի բյուջեի եկամուտները ձևավորվում են վարչական և ֆոնդային բյուջեների միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներին ակնկալվում է կապիտալի գործառնություններից եկամուտների ստացում: Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են հարկերի, տուրքերի և ֆինանսական համահարթեցման դոտացիաների հաշվին: Սեփական եկամուտները 2022 թ. կազմում են համայնքի բյուջեի եկամուտների 29.6 %-ը, իսկ ֆինանսական համահարթեցման դոտացիաները՝ 64 %-ը:

Համայնքի բյուջեի եկամուտների նախորդ տարիների փաստացի մակարդակների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրանք աճ ունեն:

2.6. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ

Վարդենիս համայնքի բնականոն զարգացման համար հիմնական խոչընդոտներն ու դժվարություններն են.

1. **աշխատատեղերի բացակայություն**
2. **բժշկական կադրերի բացակայություն**
3. **ժամանակակից բուժսարքավորումների բացակայություն**
4. **բազմաբնակարան բնակելի շենքերի սեյսմակայուն անմխիթար վիճակը**
5. **Տարածաշրջանում դեպի պատմանական հուշարձաններ տանող ճանապարհների անմխիթար վիճակը, որը խոչընդոտում է զբոսաշրջության զարգացմանը**

2.7. Համայնքի ուժեղ և թույլ կողմերի, հնարավորությունների և սպառնալիքների (ՈւԹՀՍ) վերլուծություն

- *Համայնքի ուժեղ կողմեր*
- *Համայնքի թույլ կողմեր*
- *Հնարավորություններ*
- *Սպառնալիքներ*

Ուժեղ կղմեր	Թույլ կողմեր

▪ Էկոլոգիական վտանգ ներկայացնող խոշոր ձեռնարկությունների բացակայություն և համայնքում արտադրված գյուղատնտեսական մթերքների էկոլոգիապես մաքուր որակ: ▪ Գյուղատնտեսական և ոչ գյուղատնտեսական նշանակության հողեր, ալպիական արոտավայրեր՝ գյուղատնտեսության և անասնապահության զարգացման համար: ▪ Անխափան գործող ֆիքսված հեռախոսակապ, բջջային հեռախոսակապ՝ «Վիվասել-ՄՏՍ», «Յուքոմ» և «Բիլայն» շարժական կապի և ինտերնետ ծառայություններ: ▪ 9 հեռուստաալիքների և կաբելային հեռուստատեսության հեռարձակում: ▪ Գազաֆիկացված բազմաբնակարան շենքեր (գրեթե բոլոր շենքերը): ▪ 2860 տարեկան ժամ արևափայլք	▪ Հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, մարզկենտրոն Գավառից Որոշ հատվածներում անբարեկարգ փողոցներ և մայթեր: ▪ 40 բազմաբնակարան շենքերի անբարեկարգ տանիքներ և բակային հատվածներ: ▪ Անբարեկարգ ոռոգման ցանցեր: ▪ Սոցիալապես անապահով ընտանիքների, միայնակ թոշակառուների, ցածր եկամուտ ունեցողների հարաբերական մեծ թիվը համայնքում: ▪ Գործազրկության բարձր ցուցանիշը:
Հնարավորություններ	**Սպառնալիքներ (վտանգներ)**
▪ Որակյալ աշխատուժի մեծ պոտենցիալ՝ տարբեր մասնագիտությունների բարձրագույն և մասնագիտական կրթությամբ կադրեր, որոնք կարող են կազմակերպել գյուղատնտեսության, կրթության ու դաստիարակության, մշակութային, շինարարական և այլ աշխատանքներ: ▪ Հիմնականում պահպանված նախադպրոցական, կրթական և մշակութային հիմնարկների տիպային շենքեր: ▪ Համայնքի և հարակից համայնքների տարածքներում զբոսաշրջության տեսանկյունից գրավիչ պատմամշակութային հարուստ ժառանգության բնության հուշարձաններ և օբյեկտներ՝ 9-12-րդ դարի Մաքենաց վանքի համալիրը,Այրքի	▪ Արտագաղթի աճ: ▪ Որակավորված մարդկային ռեսուրսների կորուստ՝ կապված արտագնա աշխատանքային միգրացիայի հետ: ▪ Քաղաքացիների անվճարունակության պատճառով գյուղատնտեսական նշանակության հողերի՝ համայնքին հետ հանձնում և դրանից բխող համայնքային եկամուտների (հողի հարկ և գույքահարկ) նվազում:

մատուռները,Կարճաղբյուրի 2-րդ հազարամյակի Կիկլոպյան ամրոցը, Սոթքի բազիլիկ եկեղեցին, բազմաթիվ խաչքարեր	

3. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում

Վարդենիսը բնակչությանը և զբոսաշրջիկներին որակյալ ծառայություններ մատուցող և սոցիալ – տնտեսական բնականոն զարգացում ապահովող համայնք է, որտեղ զարգացած են միջազգային տուրիզմն ու էկոտուրիզմը, և որտեղ ստեղծված է ներդրումների համար մրցունակ միջավայր, իսկ բնակիչներն ապրում են բարեկեցիկ կյանքով:

Նշված տեսլականին հասնելու համար համայնքը որդեգրել է հետևյալ **ռազմավարությունը՝**

- Տարեցտարի բարելավել համայնքի ֆինանսական դրությունը՝ իրականացնելով համայնքի բյուջեի հարկային եկամուտների գանձման, ոչ հարկային եկամուտների, տեղական տուրքերի ու վճարների սահմանման և գանձման արդյունավետ քաղաքականություններ.
- Ըստ ամենայնի խթանել ձեռներեցությունը՝ այն սերտորեն կապելով համայնքի տնտեսական զարգացման հետ.
- Պահպանել համայնքի ճարտարապետության արդի ոճը, բացառել ինքնակամ շինարարությունը և ապօրինի հողազավթումները.
- Բարելավել կրթական և մշակութային ոլորտի համայնքային կազմակերպությունների գործունեությունը՝ մշտապես հարստացնելով նրանց նյութատեխնիկական բազան.
- Շարունակել և աստիճանաբար ընդլայնել համայնքի բարեկարգման և կանաչապատման աշխատանքները.
- Իրականացնել սոցիալական տարաբնույթ ծրագրեր.
- Խթանել համայնքային տարբեր շահագրգիռ կողմերի, դոնոր կազմակերպությունների, հասարակական և բարեգործական կազմակերպությունների, անհատների նախաձեռնությունները և նրանց

ներգրավմամբ հետևողականորեն իրականացնել բարեփոխումներ՝նպաստելով համայնքի սոցիալ-տնտեսական զարգացմանը.

Համայնքի զարգացման 2022-2026 թթ. հնգամյա ծրագրի հիմնական **նպատակներն են՝**

- Ունենալ բարեկարգ և լուսավոր ներհամայնքային ճանապարհներ և փողոցներ.
- Ունենալ բարեկարգ բնակարանային ֆոնդ.
- Քաղաքապետարանի շենքային և գույքային պայմանների բարելավում.
- Բնակչության կենսամիջավայրի բարելավում (կանաչապատում, կոյուղու կոլեկտորի վերակառուցում և այլն).
- Բնակչությանը մատուցվող ծառայությունների (կրթության, ջրամատակարարման, աղբահանության և այլն) շրջանակի ընդլայնում և որակի բարձրացում.
- Համայնքում աշխատատեղերի ընդլայնմանը նպաստում՝ ռացիոնալ օգտագործելով բնական ռեսուրսները, զարգացնելով առևտրի և սպասարկման ոլորտն ու գյուղատնտեսությունը.
- Զարգացման հիմնական ուղղությունների իրականացման գործընթացում խիստ կարևորվում է տեղական իշխանությունների, համայնքի բնակչության, քաղաքացիական հասարակության, լրատվամիջոցների և գործարարների սերտ համագործակցությունը:

3.1. Համայնքի զարգացման տեսլական

Առաջիկա 5 տարում, որդեգրված քաղաքականության և համայնքի հնգամյա ծրագրի իրականացման արդյունքում, համայնքապետարանն ակնկալում է ունենալ առավել բարեկարգ, կանաչապատ, տնտեսապես զարգացած՝ նոր գործարար սուբյեկտներով, հոգևոր, մշակութային, մարզական ակտիվ կյանքով ապրող, սոցիալական բևեռվածության մեղմացմամբ՝ բնակիչների առավել բարեկեցիկ կյանքով Վարդենիս:

Ակնկալվող և արդեն նախագծված ծրագրերի միջոցով, որոնք պետք է իրականացվեն ՀՀ կառավարության, համայնքային բյուջեի միջոցների, միջազգային կառույցների և այլ դոնորների ներդրումներով, համայնքը կունենա նաև առավել համակարգված աղբահանություն, թափոնների վերամշակում:

Համայնքի զարգացման հիմնական գրավականը պետք է լինի զբոսաշրջությունը,գյուղատնտեսության մեջ նոր տեխնոլոգիաների և նոր տեխնիկաների կիրառմամբ գյուղ մթերքների արտադրության ավելացումը:

3.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ

Համայնքի պարտադիր խնդիրները լուծելու համար սահմանվել են խնդիրների լուծման անմիջական նպատակները, նախատեսվող ծրագրերը և ծրագրերից ակնկալվող միջանկյալ արդյունքները: Յուրաքանչյուր նպատակի չափելիությունն ապահովելու համար սահմանվել են կատարողականի առանցքային ցուցանիշներ և ցուցանիշների թիրախային արժեքներ: Սահմանվել է նաև համայնքի պարտադիր խնդիրների լուծման համար անհրաժեշտ բյուջեն՝ հինգ տարվա կտրվածքով: Բյուջեն ներկայացվել է երեք թվով՝ ընդհանուր ծախսեր, ընթացիկ ծախսեր, կապիտալ ծախսեր: Համայնքի զարգացման յուրաքանչյուր ծրագրի

համար կազմվել է անձնագիր, որում առավել մանրամասն ներկայացված են նախատեսվող ծրագրերը: